

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՆԵՏ ԿԱՊՎԱԾ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Խ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի շարք հարցերի մասին մեր հոգիվածներից երկուսի վերաբերյալ րնդարձակ քննադատականով հանդես է եկել զոցենտ է. Պիվազյանը¹։ Սկզբից եեթ նշենր, որ նրա գիտողություններից մեկ-երկուսը րնդունելի են։ Սակայն դրանք էլ վերաբերում են ոչ ճշգրիտ ձևակերպված մի քանի նախադասությունների. իսկ քննադատությունն ամբողջությամբ մերժելի է։

Պիվազյանը գրում է. «Իր հոգիվածների հենց սկզբում հոգիվածագիրը (այսինքն՝ մենք—Խ. Թ.) հայտարարում է, թե «Մխիթար Գոշի Դատաստանագիրը շատ բիշ է ուսումնասիրված։ Այն հանգամանորեն չի քննված, մանավանդ, բանասիրական առումով»։ Ըիշտ չէ։ Չխոսելով մեր անվանի բանասերներից մի քանիսի՝ օրենսգրքի բանասիրական կողմին վերաբերող մի շարք լուրջ ուսումնասիրությունների ու հոգիվածների մասին, հիշենք միայն մի հանգամանք։ Միջնադարյան մատենագիտական հուշարձաններից Մխիթար Գոշի «Դատաստանագիրը» առաջինն է, որ ունեցել է գիտական-քննական հրատարակություն, այն էլ գիտական բարձր կատարմամբ» (էջ 194)։

Վ. Բաստամյանցը Դատաստանագիրքն իրոք հրատարակել է մեծ հմտությամբ, խնամքով, նույնիսկ բժախնդրությամբ։ Այդ հրատարակությունն իր ժամանակի համար արժանի է ամենաբարձր գնահատականի։ Խիստ արժեքավոր են Վ. Բաստամյանցի ծանոթագրությունները ևս։ Այնտեղ կան բնագրական ու բանասիրական շատ արժեքավոր գիտողություններ։ Բայց Դատաստանագրքի բանասիրական կողմին վերաբերում են Վ. Բաստամյանցի մի քանի գիտողությունները և նրա րնդարձակ «Յառաջաբանութիւնից» միայն 101—102, 109—110 և 111—112 էջերը, րնդ որում ձեռագրախմբերի հարցին նվիրված է րնդամենը մոտ մեկ էջ (109 էջում)։ Այնուհետև, Դատաստանագրքի ձեռագրախմբերին ու խմբագրություններին շորս էջանոց մի ենթադրութիւն է նվիրել Շ. Կարստը «Հայկական իրավունքի պատմության ուրվագիծ» իր աշխատության մեջ։ Վերջապես, Դատաստանագրքի երկու խմբագրությունների մասին շատ ուշադրով մի հոգիված ունի Վ. Հացունին։ Մի քանի ուսումնասիրողներ էլ այս կամ այն առիթով խոսել են Դատաստանագրքի առանձին ձեռագրերի մասին։ Ահա ամբողջը։ Այս բոլորից հետո կարելի՞ է ասել, թե Դատաստանագրքի հետ կապված բանասիրական բոլոր հարցերը հսնգամաճ-րեն րննված են։ Քննադատականից վերը կատարված մեզբեշումից երևում է, ու Պիվազյանը տարբերում է ուսումնասիրությունը հոգիվածից։ Այդ տարբերու-

¹ Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրությունների մասին, «ատմա-բանասիրական հանդես», 1964, N 2, էջ 193—212։

թյունը նկատի ունենալով մենք հայտարարում ենք, որ Դատաստանագրքի հատկապես բանասիրական կողմին վերաբերող ոչ մի հատուկ ուսումնասիրություն չկա²։ Հակառակ դեպքում Պիվազյանը պետք է նշեր, ինչպես ընդունված է, ուսումնասիրության հեղինակին, վերնագիրը, հրատարակության տեղն ու թվականը, որպեսզի նրա հայտարարություններն օգից կախված չմնային։ Պիվազյանը շարունակում է. «Բավական հետազոտված է հենց ինքը՝ «Դատաստանագիրքը»... «Դատաստանագրքի» մասին ուսումնասիրություններ ունեն Ղ. Ալիշանը, Բրոսսեն, Բիշոֆը, Վ. Բաստամյանցը, Մ. Ալեքսեևը, Մ. Արծրունին, Կ. Բասմաջյանը, Բ. Կյուլեսերյանը, Եղիազարովը, Խ. Սամվելյանը, Հացունին, Հ. Ոսկյանը, Մ. Արեղյանը, Ա. Սուքիասյանը, Ա. Թովմասյանը և ուրիշներ» (էջ 193)։ Եթե Պիվազյանը կարգուցած լիներ իր թվարկած հեղինակների աշխատությունները, ապա չէր գրի, թե Դատաստանագրքի մասին ուսումնասիրություններ ունեն, օրինակ, Ա. Խոսեևո, Բրոսսեն, Կյուլեսերյանը, Եղիազարովը, Բիշոֆը։ Այս վերջինի մասին Վ. Բաստամյանցը գրում է. Բիշոֆը «ամենևին զաղափար չէ ունեցել Մխիթար Գոշի Դատաստանագրքի մասին»³, իսկ պրոֆ. Խ. Սամվելյանը ավելացնում է. Բիշոֆը «ընդհանրապես հայ իրավունքի մասին զաղափար չի ունեցել»⁴։ «Բաների» հոգվածում մենք գրել ենք. «Ջեռագրերի ուսումնասիրությունը միաժամանակ ցույց տվեց, որ Դատաստանագիրքը մեզ է հասել երկու տարրեր խմբագրությամբ։ Երկու խմբագրությունների միջև եղած ձևական տարբերություններն առաջին անգամ նշել է Բաստամյանցը։ Դատաստանագրքի հետագա ուսումնասիրողներից ձեռագրերի խմբավորման հարցին անդրադարձել է գերմանացի հայագետ Հ. Կարստը»⁵։ Ինչպես տեսնում է ընթերցողը, մենք արձանագրել ենք փաստը և անմիջապես շարադրել դրա պատմությունը։ Մեր այս տողերի կապակցությամբ Պիվազյանը գրում է. «Ընթերցողին թվում է, թե «Դատաստանագրքի» երկու խմբագրություն ունենալու փաստը ձեռագրերի ուսումնասիրությամբ առաջին անգամ հայտնադործում է Թորոսյանը։ Այնինչ բանասիրության մեջ վաղուց նկատված իրողություն է դա. առաջին անգամ այն նկատել ու նշել է Բաստամյանցը, ապա և Կարստը։ Թորոսյանը չի թաքցնում, որ այդ նկատելն Բաստամյանցն ու Կարստը» (էջ 194—195)։ Ընդամենը հինգ տողում Պիվազյանը և՛ կրկնում է Թորոսյանին, և՛ չուրջ մեղադրանք բարդում նրա վրա և անմիջապես արդարացնում։

Հենց նոր հարուցած մեղադրանքում արդարացնելով Թորոսյանին, Պիվազյանը, սակայն, նույն պարբերության մեջ նորից է մեղադրում նրան, բայց արդեն փոխելով մեղադրանքի հիմքը։ Ինչո՞ւմն է բանը։ Մենք գրել ենք, որ խմբագրությունների մեջ Բաստամյանցն ու Կարստը չեն տեսնում դասային դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերի արտացոլում, այդ

² Մի վերապահում. կա մի ուսումնասիրություն նվիրված Դատաստանագրքի հեղինակի հարցին։ Այդ ուսումնասիրությունը տեղ չի գտել Դատաստանագրքի ռուսերեն հրատարակությանը կցված գրականության ցանկերում։ Այդ պատճառով էլ Պիվազյանը ծանոթ չէ դրան։

³ «Դատաստանագիրք հայոց», Յառաջարանություն, էջ 27։

⁴ «Հին հայ իրավունքի պատմություն», էջ 9։ Խ. Սամվելյանը գրում է. «Երոսսեի աշխատությունները չի կարելի ուսումնասիրություններ անվանել. նրանք ավելի շուտ ինֆորմացիոն և անդեկատուական հոգվածներ են»։ «Իրավագիտական տեղեկատվ. նույնպես անսովոր դուրս է հանդիսանում Կ. Բասմաջյանի «Հայ իրավունքը սկզբից մինչև մեր օրերը» թողուցիկ ակնարկը»։ նույն տեղում, էջ 13։

⁵ «Բաների Մատենագրութիւն» Ա՝ 6, 1962, էջ 57։

պատճառով խմբագրությունների ստորաբաժանման հիմքում դնում են միայն ձեական կամ լեզվական-ոճական առանձնահատկություններ: Պիվազյանն առարկում է. «Բասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերը» պահանջում են տալիս օրենսգրքեր, և չեն կարող առաջանալ միևնույն օրենսգրքի, միևնույն գատաստանագրքի տարբեր խմբագրություններից» (էջ 195): Նախ, քննենք այս գատողության երկրորդ մասը: Եթե Պիվազյանն առհասարակ գատողություն է անում այն մասին, որ դասային-դասակարգային ու սոցիալ-տնտեսական տարբեր շահերը չեն կարող առաջանալ միևնույն օրենսգրքի տարբեր խմբագրություններից, նա ճիշտ է, թեև տվյալ դեպքում, այդ գատողությունը բոլորովին ավելորդ է ու անտեղի: Բայց եթե այդ գատողությամբ նա ուզում է առարկել մեզ, իսկ նա իրոք առարկում է. «այդ ավելորդ գործ է կատարում: Մենք ոչ մի տեղ չենք ասել, թե օրենսգրքերը կամ դրանց խմբագրությունները ստեղծում են դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահեր: Այժմ քննենք վերը բերված գատողության առաջին մասը՝ «դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարբեր շահերը պահանջում են տարբեր օրենսգրքեր»: Ըի՞շտ է այս դրույթը. մասնավորապես այն մտքերի կապակցությամբ, որ արտահայտել ենք մենք: Ո՛չ ճիշտ չէ: Յուրաքանչյուր օրենսգիրք անպայման ամրապնդում ու պաշտպանում է այն հասարակական հարաբերությունները, այն պետական-իրավական կարգը, որը ձեռնտու է իշխող դասակարգին: Բայց շահագործողական հասարակարգում, այդ թվում և տվյալ տիրական կարգերում, իշխող դասակարգը երբեք միատարր, միասեռ չի եղել: Ավատատիրական կարգերում իշխող դասակարգը կազմված էր զանազան դասերից, տարբեր խմբերից, որոնք ընդհանուր դասակարգային շահերից բացի ունեին նաև իրենց նեղ դասային, խմբային շահերը: Պատմության մեջ միշտ էլ դիտված երևույթ է իշխող դասակարգի տարբեր դասերի, խմբերի, խմբակցությունների պայքարը հանուն իրենց դասային, խմբային շահերի: Նվ այդ պայքարը, դասային-դասակարգային այդ տարբեր շահերը արտացոլվել, արտահայտվել են իրավական միևնույն հուշարձանում: Այլ կերպ նույնիսկ դժվար է պատկերացնել: Բախվող շահերի արդյունքը կարող է լինել մի իրավական ակտ, որի մեջ այդ տարբեր շահերը արտահայտվում են ըստ դրանք կրողների ուժերի իրական հարաբերության: Նման օրինակներ կարելի է շատ բերել, այստեղ բավականանանք վկայակոչելով, օրինակ, Ազատությունների Մեծ խարտիան: Սա ընդունվել է 1215 թ., ուստի պատկանում է Մխիթարի դարաշրջանին: Իրավական այս փաստաթուղթը արտահայտում, ամրապնդում ու պաշտպանում է, անշուշտ, մեկ դասակարգի՝ իշխող դասակարգի շահերը: Բայց... խոսքը տանք այդ փաստաթղթի խոր գիտակ պրոֆ. Գուտնովային. «Великая Хартия вольностей как политический и правовой источник интересна прежде всего тем, что она отразила общее соотношение социально-политических сил в стране в тот период... экономические и политические требования различных социальных элементов оппозиции... Все статьи (Хартии—Х. Т.) можно разделить на три основные группы:

1. Статьи, отражающие материальные интересы разных социальных слоев» и т. д.⁶

⁶ «Хрестоматия памятников феодального государства и права стран Европы». Москва, 1961, էջ 128 (ընդգծումները մերն են—Մ. Խ.):

Ինչպես տեսնում ենք, սոցիալական տարրեր շերտերի նյութական շահերը արտացոլվել են միևնույն իրավական հուշարձանում: Նույն ձևով էլ Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրությունների նշված հոդվածներում արտացոլվել են դասային-դասակարգային և սոցիալ-տնտեսական տարրեր շահեր:

Հասարակագիտական-իրավագիտական այս ընդհանուր հարցերից հետո Պիվազյանն անցնում է բուն բանասիրական նյութին, ամենից սուղ կանգ առնելով Դատաստանագրքի հորինման թվականի վրա: Նա ջանք չի խնայում ապացուցելու, չակոռակ մեղ, որ 1184 թ. Դատաստանագիրքը ավարտված չէր, որ այդ ժամանակ գրված էր միայն և միայն Նախագրություն⁷: Քննենք նրա փաստարկները մեկ առ մեկ: Պիվազյանը, նախ, մեջ է բերում Նախագրության հետևյալ հատվածը. «Բայց պարտ է գիտել, զի ոչ թէ այս միայն է գիրք Դատաստանի գոր այժմս գրեմք, և ոչ թէ ի մէնջ միայն պարտ է առնուլ դատարտումն, զի զկանոնաց ունի գնմանութիւն: Զի որպէս կանոնք զի ոչ միանգամ եղաւ և ոչ իմիում տեղոջ և ոչ ի միոջէ, այլ առ սակաւ սակաւ և ի բազում ժամանակաւ և ի բազմաց եղաւ և եղեալ լինի մինչև յաւիտեան... Քանզի կանոնաց հրամանք է ի տարւոյն երկիցս անգամ ժողով լինել և քննել ի յաշխարհի նորագոյն ինչ իրք յայտնիցին, այնորիկ սահմանս և կանոնս հաստատել և ուղղել: Այսպէս պարտ է լինել և դատաստանիս իրաց, զի որքան նորագոյն իրք պատահի և քննեսցի յիմաստնոց և հատցի դատաստան՝ գնոյն գրել ի գիրս յայս»⁸: Սրա մասին Պիվազյանը, հետևելով մեզ⁹, գրում է. «Ըստ Մխիթարի օրենսգիրքը ոչ թե միանգամից, այլ հետզհետեւ... զրվւող բան է, դատական պրակտիկան անընդհատ հարստացնելու է այն» (էջ 197), բայց անսպասելիորեն այնպիսի հետևություն է անում, որ, թվում է թե անհասկանալի են մնացել գրաբար բիշ թե շատ ընդարձակ նախադասություններ: «Ուստի և,—շարունակում է նա,—«Դատաստանագրքի» ավարտման մասին չէր խոսելու հեղինակը, որովհետև ինքն էլ չգիտեր թե երբ է ավարտելու» (էջ 197): Մխիթարը ոչ քն չգիտեր, քն եւր է ավարտելու, այլ հաստատ գիտեր, որ երբեք չի ավարտելու ոչ ինքը, ոչ էլ իրենից հետո որեւէ մեկը, որովհետև ըստ նրա՝ Դատաստանագիրքն անհասարակ ավարտվող գործ չէ. կյանքի դարգացմանը, դատական փորձի հարստացմանը զուգընթաց այն անընդհատ պետք է հարստանա և լրացվի: Բայց սա բնավ ապացույց չէ այն բանի, որ Դատաստանագիրքը տվյալ ժամանակում՝ 1184 թ. մի ամփոփ ամբողջություն չէր, ավարտված չէր (պայմանականորեն):

Պիվազյանը վկայակոչում է հիշատակարանի հետևյալ հատվածը. «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն (կամ՝ իրողութեան) եղև ի թուակաւութեանս հայոց ՈՒՐ...» և բացատրում. «Նախ՝ գրաբար լեզվին հեռավոր ծանոթություն իսկ ունեցողը կնկատի, որ «ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութիւն եղև» նշանակում է՝ մենք այս գործը ձեռնարկեցինք, սկսեցինք» (էջ 197): Գրաբար լեզվին մոտիկ ծանոթություն ունեցող Պիվազյանը շատ հեռու է այդ նախադասությունից հիշտ հետևություն անելուց: Մենք շատ փաստեր

7 Մենք շատ փաստեր ունենք պնդելու, որ Դատաստանագիրքը գրվել է ոչ թե նախագրությունից հետո, այլ որ նախագրության որոշ մասը գրվել է Դատաստանագրքից հետո, որով մասը՝ նրա հետ զուգահեռաբար: Այս արդյունքը անդամանորեն քննված է մեր ուսումնասիրության մեջ:

8 «Դատաստանագիրք հայոց», էջ 66—67:

9 Տե՛ս «Թանրեր Մատենադարանի», V 6, էջ 61:

ուսենք այդ նախադասությունը հասկանալու այլ կերպ, քան առաջին հայացքից երևացող դրա իմաստն է։ Բայց եթե հասկանանք նույնիսկ այնպես, որ Դատաստանագրքի շարադրանքն սկսվել է 1184 թվականին, ապա մի՞թե կարելի է դրանից եզրակացնել, ինչպես անում է Պիվադյանը, որ այդ նույն թվականին այն չի ավարտվել։

Նախադրության մեջ Մխիթարը գրում է. «...այս գիրք որ ի մէնչ սկսեալ եղև, եթէ ի մէնչ առ սակաւ սակաւ գրեալ լինի, եւ եթէ ի բազմացն եւ յայլ եւ յայլ ժամանակս գրեսցի...»¹⁰։ Իր գրաբարագիտությունը ցուցադրելու համար մեր քննադատը թարգմանում է այս նախադասությունը աշխարհաբար և բացատրում. «Հեղինակն, ուրեմն, խոսում է հետզհետե գրելիքի մասին... և ոչ թե գրվածի, ավարտվածի. նա հայտնում է, թե ինքը հետզհետե գրելու է Դատաստանագիրքը, և ոչ թե գրել է (էջ 198. ընդգծումները Պիվադյանինն են— հ. Թ.)։ Եթե այս նախադասությունը հասկանանք նույնիսկ այնպես, ինչպես հասկացել է Պիվադյանը, ապա Մխիթարը ասում է, որ գրելու է Դատաստանագիրքը։ Բայց մի՞թե Մխիթարը գրանով ասում է նաև, որ 1184 թ. չի ավարտելու կամ չի ավարտել Դատաստանագիրքը։ «Բանբերի» մեր հոգովածում խոսքը ամենեկին էլ այն մասին չէր, թե երբ է Մխիթարն սկսել գրել Դատաստանագիրքը, այլ այն մասին, թե երբ է ավարտել։ Մեզ հերքելու համար Պիվադյանը պետք է փաստեր բերեր ոչ թե այն մասին, որ Դատաստանագրքի շարադրությունն սկսվել է 1184 թ. և որ այդ թվականին գրվելու ընթացքի մեջ է լիել, այլ այն մասին, որ Դատաստանագիրքը 1184 թ. չի ավարտվել։ Պիվադյանը այդպիսի ոչ մի փաստ չի բերել և չէր կարող բերել։

Նախադրության՝ Դատաստանագրքի թվականի հետ առնչվող վկայությունները բաժանվում են երկու խմբի։ Վկայությունների մի խումբը հաստատում է, որ Դատաստանագրքի շարադրանքն սկսվել է 1184 թ. և այդ թվականին գրվելու ընթացքի մեջ է լիել, մյուսը՝ որ 1184 թ. Դատաստանագիրքը ավարտվել է։ Վկայությունների առաջին խմբի հետ արդեն ծանոթացանք, այժմ անցնենք երկրորդ խմբին։

Հիշատակարանից վերը բերված տողերից հետո Մխիթարը գրում է. «Ընդ որս եւ դայս մաղթեմք որ-եթէ պատահի եւ հաճոյ ոմանց թուի 30ԹԻՆԱԿԷ ԱՍՏԻ փոխել դիրս դատաստանի, ընդ նմին փոխեսցիք եւ զյիշատակս դայսոսիկ»¹¹։ Գրաբար բաղմամբիվ նախադասություններ թարգմանել սիրող մեր հարգարժան ընդդիմախոսը խուսափել է այս նախադասությունը թարգմանելուց, ուստի թարգմանեմք մենք. «Ընդ որում և այս ենք մաղթում, որ եթե պատահի և ոմանց հաճելի թվա (հենց) այս օրինակից ընդօրինակել Դատաստանագիրքը. թող ընդօրինակի նաև այս հիշատակարանը»։ Մխիթարը շեշտում է հենց իր օրինակը. նշանակում է հիշատակարանը գրելիս Դատաստանագիրքն ավարտված էր, որովհետև կար արդեն մի օրինակ. մի օրինակը։

Նույն այդ հիշատակարանում Մխիթարը գրում է. «Ջամենեսեան զկնի մեր եկեալսդ զհարս եւ զեղբարսդ, ի զանազան ժամանակս ազաչեմ մաղթանօք զյոյով եւ զոչ սակաւ սխալանս ուղղեսցիք պատահեալք ընթերցման երկու

10 «Դատաստանագիրք» նապոց», էջ 68։
11 Նույն տեղում, էջ 71 (ընդգծումը սերն է— հ. Թ.)։

տառիս¹² և պիրաւացի թերին լցջիր»¹³։ «Երկու տառի» տակ ալստեղ կարելի է հասկանալ Բ խմբագրության Դատաստանագրքի երկու մասերը։ Ինչպես կտեսնենք հետագայում, Պիվազյանը սկզբնական է համարում Դատաստանագրքի հենց այս խմբագրությունը, որտեղ այն բաժանված է երկու մասի։ Բայց Պիվազյանի կողմից սկզբնական համարվող խմբագրության հիշատակարանի համաձայն երկու տառը, երկու մասը կար, ուրեմն հակասության մեջ չընկնելու համար նա պետք է ընդունեն, որ 1184 թ. Դատաստանագիրքն ամբողջությամբ պատրաստ էր։ Անկախ այն բանից՝ հիշատակարանում «Երկու տառ» է, թե «տառ», հիշատակարանը գրելիս Դատաստանագիրքը ավարտված էր, որովհետև «տառ» բառը առկա ամբողջություն է նշանակում։

Նախագրության մեջ Մխիթարը մի քանի անգամ գրում է Դատաստանագրքի մասին. «...գի ոչ թե այս միայն է գիրս դատաստանի զոր այժմս պրեմք»¹⁴, կամ՝ «...գի այժմ ի մէնջ սկիզբն սորա եղեւ...»¹⁵, կամ՝ «...այս գիրք, որ ի մէնջ սկսեալ եղեւ...»¹⁶։ Վերը նշեցինք, որ Մխիթարի այս վկայությունները Պիվազյանը ճիշտ չի հասկացել։ Բացատրենք։ Մխիթարի պատկերացմամբ ինչպես արդեն ասացինք, դատաստանագիրք գրելը մի երկարատև, շարունակական, բայց և չավարտվող ու անվախճան պրոցես է. «Ձի որպէս կանոնք պի ոչ մի անգամ եղաւ և ոչ ի միում տեղոջ և ոչ ի միոջէ, այլ առ սակաւ սա

¹² Նույն տեղում։

¹³ ԳԱ «Տեղեկագրի» 1964 թ. № 1-ում տպագրվել է Գ. Աբգարյանի «Մատենագիտական նոտույթներ» հոդվածը։ Հոդվածագիրն ալստեղ կարծում է, թե «Երեւոյցման երկու տառիս» արտահայտությունը ազավաղված է։ Նա, նախ, փորձում է ապացուցել, որ հեղինակագիր օրինակում եղել է «Երեւոյցմամբ տառիս», որպեսզի հետո կարողանա գրել. «Գոչի հիշատակարանն ընդօրինակող գոչը «Երեւոյցմամբ» բառի վերջին Բ տառը անուշադրարար րնկալել է որպես Բ (=երկու) թվանշան և այգպիսով «Երեւոյցմամբ տառիս» դարձել է «Երեւոյցման Բ (=երկու) տառիս» (էջ 79)։ Լեզուներ մի վարկ ան. որ «Երեւոյցմամբ տառիս»-ը դարձել է «Երեւոյցման Բ տառիս» անուշադրարար, բայց մի՞թե գրչական այդ վրիպակը տեղի տնենալուց հետո հրաշք կատարվեց և Դատաստանագիրքն ի՞նչ իրեն, մեխանիկորեն բաժանվեց երկու մասի։ Դիմենք ձեռագրերին, որոնք պարունակում են քննվող արտահայտությունը։

№ 485 (Բ) Երեւոյցման Բ տառիս

Հենետիկի ձեռագիր (Ա) Երեւոյցման տառիս

№ 438 (Բ) Երեւոյցման Բ տառիս

Ջմառի ձեռագիր (Ա) Երեւոյցմամբ տառիս

№ 2635 (Բ)

№ 2775 (Ա) Երեւոյցմամբ զգիրգ

№ 6496 (Բ)

№ 3562 (Ա) Երեւոյցմամբ տառիս

Վեննայի ձեռագիր (Բ)

(Բ խմբագրության 5 ձեռագիր ունեն՝ «Երեւոյցման սուրբ տառիս»։ Այս Երեւոյցումը տվյալ դեպքում, բնականաբար, մեղ չի հետաքրքրում)։ Ձեռագրերի համարների կողքին դրված տառերն արտահայտում են՝ Բ=Բ խմբագրություն, որտեղ Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի, Ա=Ա խմբագրություն, որտեղ Դատաստանագիրքը մասերի բաժանում չունի։ Ինչպես տեսնում ենք, «Երեւոյցման Բ տառիս» Երեւոյցումն ունեն միայն և միայն այն նոտագրերը, որոնցում Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի, իսկ մասերի բաժանում չունեցող ձեռագրերն ունեն «Երեւոյցման (կամ՝ Երեւոյցմամբ) տառիս»։ Նգրակացությունը պարտադիր է թե բանասիրորեն և թե տրամաբանորեն. «Երեւոյցման (կամ Երեւոյցմամբ) տառիս»-ը դարձել է «Երեւոյցման Բ տառիս» միայն և միայն այն բանից հետո, երբ Դատաստանագիրքը բաժանվել է երկու մասի։ Ուրեմն՝ այն, ինչ Գ. Աբգարյանը համարում է աղճատմունք, սոնուշալություն հետևանք, մտածված-գիտակցված աշխատանքի արդյունք է։

¹⁴ «Դատաստանագիրք հայոց», էջ 66։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Նույն տեղում, էջ 68։

կառ եւ ի բազում ժամանակս եւ ի բազմաջ եղաւ եւ եղևալ լինի մինչև լաւի-
տեան... ի դէպ է ասել զի այսպէս լինիցի եւ ի գիրս դատաստանի»¹⁷։
Այդ պրոցեսի սկիզբը ոչ թէ Դատաստանագրքի սկիզբն է, այլ Դատաս-
տանագիրքն ամբողջութեամբ է սկիզբ։ Այդ պրոցեսն սկսվում է ոչ
թէ Դատաստանագիրքը գրելու ձեռնարկումով, այլ Դատաստանագիր-
քո ինչ-որ կետում պայմանականորեն ավարտի հասցնելուց հետո։
Քանի ղեռ Դատաստանագիրքը պայմանականորեն չի ավարտված, քանի ղեռ
տվյալ ժամանակահատվածում հեղինակը չի արել այն ամենը, ինչ հնարավոր
է համարում եւ, հետևապէս, Դատաստանագիրքը ղեռ շրջանառութեան մեջ չէ։
Այդ պրոցեսը չի կարող սկսվել։ Մխիթարի խոսքերը վկայում են, որ այդ
պրոցեսն է սկսվել։ Կանոնգրքի եւ այլ գրքերի հետ Մխիթարի կատարած հա-
մեմատութիւններն էլ այդ են հաստատում եւ միայն այդ կերպ են իմաստա-
ւորվում։ Կանոնգրքի սկիզբը դրվեց ոչ թէ առաջին կանոնախմբի առաջին
կանոնը գրվելիս, այլ առաջին կանոնախմբը գրվելուց հետո։ «Ձի յառաջ
լառաբելոցն եղաւ եւ ապա ի նիկիա, եւ յառաջ քան զնա այլք, եւ ապա յայլ
եւ յայլ ժամանակս ի ժողովոց եւ ի հարց, որք զհետ եկին։ Բ դէպ է ասել զի
այսպէս լինիցի եւ ի գիրս դատաստանի. զի ալժմ ի մէնջ սկիզբն սորա եղև
եւ ի դէպ է առ սակաւ աճել յայլ եւ յայլ ժամանակս... եւ այսպէս առ սակաւ
սակաւ դալ ի կատարումն եւ կատարեալ լինել»¹⁸։ «Ձի ալժմ ի մէնջ զկիզբն
սորա եղև» չի նշանակում, թէ Դատաստանագիրքը գրել սկսվեց, նրա առաջին
մի քանի հոդվածների սկիզբը գրվեց, ինչպէս պատկերացնում է Պիվադյանը։
Այլ նշանակում է Դատաստանագրքի, որպէս ամբողջութեան, օրենսգիրք ու-
նենալու սկիզբը գրվեց։ «Այս գիրք, որ ի մէնջ սկսեալ եղև»։ Մխիթարը շատ
պարզ է ասում՝ գիրքն ամբողջութեամբ է նրանից սկիզբ առել։ (եղև—անցյալ
կատարյալ), հետևապէս այդ տողերը գրելուց առաջ Դատաստանագիրքը
պատրաստ էր։

Նախագրութեան ղեռ երկրորդ գլխում Մխիթարը գրում է. «Ձի արա-
րածական բնութիւնս միշտ մոռացող է բարւոյն վասն բազում ախտից հոգւոյ
եւ մարմնոյ եւ թէպէտեւ կամիմք ուղիղ առնել դատաստանն՝ ի ժամու դատ-
մանն ի մոռանալոյ սխալիմք եւ յետոյ զղջացեալ տարակուսիմք էութեան
կամ չէութեան յարչարեալք։ Այլ օր մի այս լիցի, եղաւ՝ զգիրս դատաստանի ր
պատճառս յիշման, զոր յամենայն ժամ ի ձեռս առեալ յիշեմք»¹⁹։ Ընդգծված
նախագասութեան իմաստը, հերավի, գծարրմբոնելի է եղել, ուստի
թարգմանենք. «Եվ որպէսզի այս չլինի, գրեցինք այս դատաստանագիրքը՝
հիշելու համար, որպէսզի ամեն ժամ ձեռքներս առնելով հիշենք»։ Այսպիսով,
երբ Մխիթարը գրում էր վերոբերյալ հատվածը, Դատաստանագիրքն արդեն
գրված, ավարտված, վերջացած էր։ Նույն տեղում Մխիթարը դարձյալ գրում է.
«Սակս որոյ չուղիւթիւն եւ յանդիմանութիւն սակաւութ այնոցիկ զգիր զգոյ-
մեցաւ՝ դատաստանի»²⁰։ Ինքզինքն վկայութիւններով չի սպաստվում քանակը
այն փաստերի, որոնք հաստատում են, որ 1184 թ. Դատաստանագիրքը ա-
վարտված էր։ Դրանք շատ են։ Վկայակոչենք դրանցից եւս երկուսը եւ վերջաց-
նենք։ Երրորդը Տղա կաթողիկոսին Մխիթարը գրում է. «Ձսուրբ եւ դաստուա-

¹⁷ Նույն տեղում, էջ 66։

¹⁸ Նույն տեղում։

¹⁹ Նույն տեղում, էջ 12։

²⁰ Նույն տեղում։

ծառեալ գլխոյդ եկեղեցեացւ Հայաստանեաց... զհարկ հողերո հրամանի նուստս յամենայնի ամենայնի Մխիթար րնկայայ, զոր վասն զրոցս էր զտատաւանի ի ձեռն եղբաւր եկելոյ և ձեռն... Այլ փութացայ և անվեհեր կատարել զայս գործ հողերո րստ իմում կարի խոշոր նիւթով և զրով... րնդ միտ ածելով և զայս՝ թէ հաճելի ձեզ լիցի, պիտին է փոխել ի նիւթ մաղաղաթեայ որչաւ ձարտարաւ, ապա թէ ոչ՝ լաւական է և մեզ յաշխատութիւնս սնոտիս և աւս կորուստ նիւթոյ։ Ազաշեմ պարապմամբ և մտադիր ընթերցմամբ քննել պիտաւժէտ մտաց իմոց զերկադ, զի և ես միշտ րնդ կարծիք քամահանաց լինելով և հալածեալ ի խնդրողէն, յղատաւանեաց զիւր վնասով և տաւապանաւ գծեալ յանգեցի... Եւ արդ. էթէ ինչ գտցի հաճելի ձեզ, Տեառն շնորհ... իսկ էթէ ոչ՝ այն մերոյ տգիտութեան է... Եւ էթէ բնաւին անաղուտ լեկեղեցի իցէ և պատճառ զայթակողութեան հրոյ տացես ձարակ և հրամայիսես և որ առ մեզ է արինակ զնոյն առնել և անխափան ձերդ կայցէ հրաման, լուկլտե մերնս ընթերցեալ վարդապետի՝ հա՛ւեալ ընկալաւն²¹։ Սա շափապանց հետաքրքրական ու վերին աստիճանի արժեքավոր փաստաթուղթ է շատ կողմերով, բայց մենք զիտենք մեզ հետաքրքրող տեսանկյունով։ Մխիթարի իսկ վկայութեամբ այդ նամակը գրելուց առաջ Դատաստանագիրքն ավարտված էր («զդատաստանաց զիրք փութով և տառապանաւ գծեալ յանգեցի», «որ առ մեզ է օրինակ» և այլն)։ Եւ րդ է գրվել նամակը։ Գրիգոր Տղան մահացել է 1193 թ.։ Ուրեմն, այդ թվականին, ամենաուշը, Դատաստանագիրքն ամբողջությամբ ավարտված էր։ Սոսկ այս փաստն, արդեն, բավական է վերջ տալու ավանդության ուժ ստացած և Պիվազյանի կողմից որդեգրված այն սխալ տեսակետին, ըստ որի Դատաստանագիրքը գրվել է մինչև Մխիթարի մահը։ Սակայն նամակից ակնհայտ է, որ Դատաստանագիրքն ավարտված էր 1193 թ. շատ առաջ։ Մինչև Գրիգոր Տղային մի օրինակ ուղարկելը վարդապետներն այն կարդացել ու հավանել էին, շարադրանքն սկսելուց հետո Մխիթարն այն շուտով վերջացրել է («փութով գծեալ յանգեցի»)։ Այս բոլորից բացի կա Մխիթարի ուղղակի վկայությունն այն մասին, որ Դատաստանագիրքն ավարտվել է 1184 թ.։ Ահա այն. «Փառք փրկչին մերոյ Յիսուսի բնդ նմին Հաւր ևւ Հոգւոյն, որ եւս զգաղարումն աստանոր տալ գրողոյ դատաստանի։ Զի թէ եւ յառաջագոյն աստցաք գրելով պատկաւ յիշատակարանն՝ էթէ արարտումն սորա ոչ է, սակայն զայժմ մեք հանդուցանել կամեցաք գրելով ըստ էարի, ոչ խափանել զայլոց. որք կամին գրել ևւ յաւելուր Եւ ԹԻՊԷՏ ՅԱՄԻ ՅՈՐՈՒՄ ՍԿՍԱՔ, ԳՐԵՅԱՔ ԶԵԿԵԱԼ ԶԱՓՍ ԴԱՏԱՍՏԱՆԻ, սակայն յաղագս հալածանաց, որ եհաս մեզ րնտանի ևւ ոչ աւտար, յապաղեաց գրել զյիշատակս զայսոսիկ»։ Այս հիշատակարանը պահպանվել է Վենետիկի և Զմմառի ձեռագրերում և գրված է Դատաստանագրի վերջում, հետևապես «զեղեալ շափաղատաստանի» խոսքերը վերաբերում են Դատաստանագրի այն տեսքին ու ծավալին, որ ներկայացնում են այդ ձեռագրերը։ Այդ ձեռագրերում Դատաստանագիրքը կազմված է նախադրությունից և 251 հոդվածից։ Նշանակում է՝ Դատաստանագիրքն այդ ծավալով 1184 թ. ավարտված էր։ Գրաբարի հետ հեռավոր ծանոթություն իսկ բնեցողն էլ կնկատի, որ Մխիթարն ասում է Դատաստանագիրքն ավարտել ևւ այն թվականին, որ թվականին որ սկսել ևւ, այսինքն 1184 թ.։

21 Զմմառի ձեռագիր, էջ 253բ—253ա (ընդգծումները մերն են—Խ. Թ.)։

Վերջացնենք այս հարցի քննությունը հիշեցնելով մեր քննադատի խոսքերը. «Ընթերցողն, անշուշտ, կհավատա Դատաստանագրքի հեղինակ Մխիթար Գոշին» (էջ 198) և ոչ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Պիվադյանին:

Անցնենք հաջորդ սկզբունքային հարցին, որին այնքան անսկզբունքորեն առարկում է Պիվադյանը: Խոսքն այն մասին է, թե Ա և Բ խմբագրություններին որն է սկզբնականը: Մենք գտնում ենք, որ սկզբնականը Ա-ն է (մասերի բաժանում չունեցող, Վենետիկ-Ջամադյան ձեռագրերով ներկայացվածը), Պիվադյանը՝ Բ-ն (մասերի բաժանվածը): Տեսնենք: Պիվադյանը գրում է «Երկու մասերի բաժանված «Դատաստանագրքում» իրարից հեռու են ընկած Հայոց կանոնագրքի որևէ կանոնախմբի հոդվածները: Բայց այստեղ կա մի շատ հետաքրքիր և ուշադրավ բան. երբ երկրորդ մասից համապատասխան հոդվածներ տեղափոխում ենք առաջին մասի մեջ և տեղավորում համապատասխան կանոնախմբերի և նրանց կանոնների հերթականությամբ ստացվում է «Դատաստանագրքի» հոդվածների այնպիսի դասավորություն, որպեսին կա այն ձեռագրերում, որոնց մեջ «Դատաստանագիրքը» մասերի բաժանում չունի» (էջ 199): Մեր մեծարգո քննադատին, ըստ երևույթին դուր է եկել այդ «շատ հետաքրքիր և ուշադրավ բանը», և, թերևս, այդ պատճառով հարկ չի համարել նշել, որ դա ոչ թե իր սեփական գիտումն է, այլ Խորոսյանի ուսումնասիրությունների արդյունքը²²: Հենց այդ գիտումն էլ այն վճռական փաստերից մեկն է, որով մենք հաստատել ենք Ա խմբագրության սկզբնական լինելը:

Մենք գրել ենք. «Ասածը հաստատվում է մի շատ կարևոր փաստով ևս: Դատաստանագրքի Բ խմբագրությունից, ճշգրտության մեծ մոտեցումությամբ, կարելի է վերականգնել Ա խմբագրության սիստեմը, մինչդեռ հակառակն անկարելի է»²³: Պիվադյանը պատասխանում է. «Ժիշտն ասած՝ անկարելի է հասկանալ Խորոսյանի գրածը. եթե սկզբնականը Ա-ն է, որից առաջացել է Բ-ն՝ էլ ինչպե՞ս Ա-ից չի կարելի ստանալ (կամ վերականգնել) Բ-ն: Եթե Ա-ից ստացվել է Բ-ն, Ա-ի սիստեմից էլ կստացվի Բ-ի սիստեմը: Ուղղակի ասենք, որ միշտ էլ Ա-ից կարելի է ստանալ Բ-ն և՛ հակառակը» (էջ 200): Ժիշտն ասած՝ եթե հասկանալ, գրիչ չէր վերցնի այդ տողերը գրելու համար, իսկ գրելու դեպքում բավական կլինեին պատասխանել *ignorantia non est argumentum* Բայց, Պիվադյանը չի բավարարվում չհասկանալու փաստն արձանագրելով և... հերքում է չհասկացածը: Մենք սկզբունքներ ենք նշել²⁴, որով կարելի է Բ-ից ստանալ Ա-ի համակարգը: Հակառակն անելու համար՝ այնպես, որ ստանայինք Բ-ի ներկա համակարգը (հոդվածների հաջորդականությունը), ոչ մի սկզբունք չենք կարող նշել: Մեզ հերքելու համար Պիվադյանը պետք է ցույց տար, սկզբունքներ նշեր, թե ինչպես կարելի է Ա-ից ստանալ Բ-ի համակարգը, և ոչ թե հայտարարություններ աներ:

Պիվադյանը շարունակում է. «Կանոնագրքի մի խմբավորման կանոնախմբերի և սրանց կանոնների հերթական կարգը թեև հիմնականում պահպանված է «Դատաստանագրքում», բայց կան նշանակալից շեղումներ. օրինակ՝

²² Տե՛ս «Թանգիտ Մատենադարանի», Ա՝ 6, էջ 64—65:

²³ Նույն տեղում, էջ 68:

²⁴ Նույն տեղում, էջ 67—68:

կանոնախմբերը Մխիթարն օգտագործել է հետևյալ հերթականությամբ. 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9, 10, 12, 15, 16, 26, 18, 20, 25, 38... Ինչպես նկատելի է՝ նույն կանոնախմբեր (2-րդ Կղեմի) օգտագործված է երկու անգամ, երկու տարբեր, իրարից հետո ընկած տեղերում... Զի կարելի պատկերացնել կանոնագրքի մի ձևագիր, որտեղ երկու անգամ դրված լինել Կղեմի կանոնախմբերը, Մխիթարն էլ միամտաբար երկու անգամ օգտագործեց» (էջ 200): Պիվազյանը ըստ էության աղավաղում է փաստերը: Նախ՝ կանոնախմբերի օգտագործման հերթականության մասին վերոբերյալ տվյալներն ա վերցրել է մեր հոգվածից²⁵, և իր սովորության համաձայն ներկայացրել որպես իր ուսումնասիրությունների արդյունք: Երկրորդ՝ Կղեմի կանոնախմբեր երկու անգամ չի օգտագործված, այլ՝ մեկ անգամ: Այդ կանոնախմբից Մխիթարն օգտագործել է 12 հանոն: Դրանցից 11-ը կենտրոնացված են մի տեղ և կադմում են Ա խմբադրության 40—50 հոգվածները և միայն մեկ կանոն հետո է խմբից (164-րդ հոգված): Ա խմբագրությունում սա միակ շեղումն է սկզբունքից, միակ ղեպքն է, երբ տվյալ կանոնախմբից ոչնչ է կանոն, այն էլ մեկ կանոն, հետո է գտնվում խմբից: Թվում է, Մխիթարն այդքանը իրավունք ուներ:

Կանոնգիրքը խոր ուսումնասիրած մեր հետազոտողներից մեկը²⁶ տյո լուշարձանի ձևագրերը բաժանում է խմբերի, ենթախմբերի և այլն, ընդ որում յուրաքանչյուր ստորաբաժանում ունի իր համակարգը՝ տարրեր մյուսներից: Այսպիսի պայմաններում մեր համեմատությունների համար կանոնգիրք ընտրելը չէր կարող պատահական չլինել: Պատահականորեն ընտրված այդ կանոնգիրքն էլ մեր Մատենադարանի № 6409 ձևագիրն էր: Դատաստանագրքում շեղումներ Կանոնգրքի համակարգից, որ ցույց են տվել հոգվածում, յեղումներ են հենց այդ ձևագրում եղած Կանոնգրքի համակարգից: Իսկ Պիվազյանը շտապել է, մանրամասնորեն չի ուսումնասիրել Կանոնգիրքը և անձանոթ նյութի մասին վճռական դատողություններ ու եզրահանգումներ անելով հարցն այնպես է ներկայացրել, որ իբր, Կանոնգիրքն ունի մեկ, կայուն համակարգ: Քանի որ Կանոնգիրքը մեզ է հասել համակարգի շատ տարբերակներով, ուստի նույնքան էլ բնական է ենթադրությունը, որ Մխիթարի ձեռքի տակ եղած Կանոնգրքի համակարգը համապատասխանել է Դատաստանագրքում արտահայտվածին: Եթե համեմատության համար վերցնենք, դարձյալ պատահականորեն ընտրված մի այլ Կանոնգիրք, օրինակ՝ մեր Մատենադարանի № 778 ձևագիրը, ապա շեղումները դրսև համակարգից Դատաստանագրքում արտահայտվում են ընդամենը երեք ղեպքով: Ա խմբագրության սկզբնականությունն առաջուղող վճռական փաստերից մեկն այն է, որ հենց անտեղ, և ոչ թե Ե խմբագրությունում է պահպանվել կանոնախմբերից քաղված կանոնների հաջորդական կարգը:

«Ընդունված է ասել, — գրում է Պիվազյանը, — թե «Դատաստանագիրքը բրոշակի սխտեմ չունի: Այս տեսակետը մերժելի է: Մեր հոգվածագիրն էլ կրկնում է այդ կարծիքը» (էջ 301): Հոգվածագիրը ոչ միայն չի կրկնում, այլև չի ընդունում այդ կարծիքը: Ահա թե ինչ ենք գրել մենք. «Հայանի է ուսումնասիրողների կարծիքն այն մասին, որ Դատաստանագիրքը բրոշակի սխտեմ ունի... մինչդեռ Դատաստանագիրքը, հատկապես Ա խմբագրությունը, չունի

²⁵ Նույն տեղում, էջ 64—66:

²⁶ С. Тигранян. Древне-армянская книга каноник, Петрозавд, 1918.

իր սեփական սխտեմը, որովհետև հայտնի չափով նույնությամբ ընկալել է իր գրավոր աղբյուրներից երկուսի՝ կանոնգրքի ու Լևտվածաշնչի սխտեմը»²⁷։ կամ՝ Լև խմբագրությունում «հոգվածները դասավորված են անփույթ ձևով, դատաստանագրքին ոչ հատուկ հաջորդականությամբ։ Իրավագիտական որևէ սխտեմ չկա»²⁸։ Ինչպես տեսնում ենք, Թորոսյանը չի կրկնում ընդունված կարծիքը, չի ասում, թե Դատաստանագիրքը շունի համակարգ կամ որշակի համակարգ։ Թորոսյանն ասում է միայն, որ Լև խմբագրության համակարգը իրավագիտական չէ, որ այն հայտնի չափով նրա սեփականը չէ։ Նկատենք, որ Թորոսյանին մերժելու համար Պիվազյանը պատրաստ է ամեն ինչի, նույնիսկ... Իրեն մերժելու Լևա թե ինչ է գրել նա նույն հարցի մասին, իր մի այլ հոգվածում. «Հայտնի է, որ Մխիթարի Դատաստանագրքում նյութի դասավորությունը շատ խառն է, իրար են հաջորդում միմյանց հետ կապ չունեցող հոգվածները, տարբեր տեղերում են գրված այնպիսի հոգվածներ կամ օրենքներ, որոնք իրար պետք է հաջորդեն և այլն»²⁹։ Սա հենց այն է, ինչ ուսումնասիրողները համարում են որոշակի համակարգի բացակայություն։ Այդ տեսակետը գալիս է Վ. Բաստամյանցից, ըստ որի «Դատաստանագիրքը ամենևին չունի մի որոշ կարգ-սխեմ, այլ հոգվածները դասավորված են շատ խառնաշփոթ կերպով, երբեմն՝ միևնույն առարկային վերաբերյալները ցրված են այստեղ և այնտեղ, երբեմն բոլորովին զանազան առարկաներին վերաբերյալները դասավորված են միմյանց հետ»³⁰։ Ինչպես տեսնում ենք, ոչ թե Թորոսյանն է կրկնում ուսումնասիրողների կարծիքը, այլ՝ Պիվազյանը, և այն էլ համարյա բառացի։ 1960 թ., դոկտոր Լ. Գալստյանի հետ բանավիճելիս, Պիվազյանին պետք է եղել ասել, որ Դատաստանագիրքը «որոշակի սխտեմ չունի», նա այդպես էլ ասել է։ 1964 թ. Թորոսյանի հետ բանավիճելիս, անհրաժեշտ է դառնում ասել, որ այդ տեսակետը մերժելի է, Պիվազյանն այդպես էլ ասում է...

Պիվազյանը, այնուհետև էլ, տրամաբանական անհաջող դատողություններ է անում հոգուտ Բ խմբագրության սկզբնականության և ավելացնում, որ դրանք «դեռևս ապացույց չեն»։ «Մանասիրական հարցերի համար,— դրում է նա,— անհրաժեշտ են, այսպես ասած, առարկայական ապացույցներ» (էջ 202)։ Եվ որպես առարկայական ապացույց Պիվազյանը վկայակոչում է Լև խմբագրությունից երկու հոգված, որոնք հղում են այլ հոգվածների, իսկ այս վերջինները, իբր, տեղադրված են հղում պարունակողներից ոչ թե առաջ, այլ՝ հետո։ Ի խմբագրությունում այն հոգվածները, որոնց հղում են, իբր, տեղադրված են ավելի առաջ, հետևապես, Լև խմբագրությունում հոգվածների «տեղն այն չէ, ինչ որ գրել է Գոշը»։ Այստեղից մյուս հետևությունը՝ սկզբնականը Բ խմբագրությունն է։ Այս փաստարկը տեղն ու տեղը արժեքազրկվում է այն հայտնի փաստով, որ օրենսգրքի որևէ հոգվածում կարող է հղում կատարվել ինչպես առաջ, այնպես էլ հետո տեղադրված որևէ հոգվածի։ Բայց, քննենք այդ «առարկայական ապացույցներն» ըստ էության։ Նա վկայակոչում է Լև խմբագրության 33-րդ հոգվածի վերջին տողերը. «Եւ այդ առ այդ լիցի»։

27 «Բանբեր Մատենադարանի», V. 6. էջ 68.

28 Նույն տեղում, էջ 58.

29 Է. Մ. Պիվազյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնչակցությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 121.

30 Յառաջաբանություն, էջ 116—117.

գի այլոց օրինակն ցուցեալ է ի կոտոյ դատաստանաց: Քննադատն ընդ-
 ցծում է այդ տողերը և շարունակում. «Ահա հետաքրքրում է ընդգծված մասը,
 որտեղ հեղինակը հայտնում է, թե տվյալ դատաստանը (վճիռը) թող լինի այս
 էոնկոստ դեպքի համար, իսկ ուրիշ օրինակների (դեպքերի) մասին զրված
 է... կովի դատաստանի մասին հողվածում, այսինքն՝ Գոշը հղում է այս հող-
 վածից առաջ զրված մի այլ հողված: Գտնում ենք այդ հողվածը. ունի «Վասն
 ժառանգաւորաց ի կոտի հարկանողաց» վերնագիրը: Սա բաժանում շունեցող
 բոլոր ձեռագրերում կրում է 42-րդ համարը, այսինքն ավելի էտ է զրված: Չի
 կարծում, արդյոք, Քոչոսյանը, որ մասերի բաժանում շունեցող տարրերա-
 կում հողվածի տեղը այն չէ, ինչ որ զրել է Գոշը: Այս հողվածների կարգը
 լնական է երկու մասի բաժանված տարրերակում, որտեղ հղում ունեցող
 հողվածը գտնվում է 2-րդ մասում (N° 12), իսկ այն հողվածը, որին հղում է՝
 1-ին մասում (N° 26)» (էջ 203):

Ստորև հղումվելու է երեք հողված, ուստի, բերենք դրանց համեմատա-
 ւան համարները ըստ խմբագրությունների.

Ա 33 — Բ II 12, Ա 42 — Բ I 26, Ա 60 — Բ II 26:

Պիվազյանը կամ շատ մակերեսորեն է ուսումնասիրել Դատաստանագիր-
 քը, կամ որոշակիորեն ձգտել է թյուրիմացության մեջ զցել ընթերցողին:
 Ընենք այդպես ենք կարծում, որովհետև Բ II 12-ը հղում է ն' Բ I 26-ին ն' Բ
 II 26-ին, ավելի շուտ վերջինին, քան առաջինին: Այս փաստն արդեն ինքնին
 հերքում է Պիվազյանի «առարկայական ապացույցը», որովհետև, ղեկավար-
 վելով նրա իսկ տրամաբանությամբ, եթե Ա խմբագրությունում ավելի առաջ
 զրված հողվածը չէր կարող հղել ավելի էտ զրված հողվածի, ապա նույն
 տրամաբանությամբ՝ Բ խմբագրությունում էլ ավելի առաջ զրված հողվա-
 ծը (II 12) չէր կարող հղել ավելի էտ զրված հողվածի (II 26): Այս հարցը, այն
 է՝ II 12-ը հղում է I 26-ին, թե՛ I 26-ին, ավելի շուտ իրավաբանական հարց
 է, քան բանասիրական, ուստի, խոսքը տանք իրավաբաններին: I 26-ի վերա-
 բերյալ ծանոթագրության մեջ Վ. Բաստամյանցը գրում է. «Սույն կանոն-
 քրեթե բառ առ բառ կրկնված է դատաստանագրքիս երկրորդ մասում նույն-
 պես 26-րդ համարով հողվածի մեջ»³¹, II 26-ի մասին՝ «Սույն 26-րդ հողվածը
 զրեթե նույնությամբ զրված է և առաջին մասում, նույնպես 26-րդ համարով
 կանոնի մեջ»³², Դարձյալ Բաստամյանցը, II 12-ի ծանոթագրության մեջ,
 գրում է. «Հեղինակը ակնարկում է Ա մասի ԻՁ կանոնը,— տես և հետևյալ ԻՁ
 հողվածը»³³, II 12-ի ծանոթագրության մեջ նույնն է ասում նաև Պապովյանը.
 (См. ст. 26, I ч. и ст. 26, II ч. Судебника)³⁴: Եթայն այս փաստերն արդեն
 լիովին հերքում են Պիվազյանի մտապածին եզրակացությունը: Աչքի ընկնող
 երկու դիտնական-իրավաբաններ պնդում են, որ I 26 և II 26 «զրեթե բառ առ
 բառ» նույն հողվածներն են. ուրեմն՝ II 12 հղում է թե՛ I 26-ին և թե՛ II 26-ին:
 Մա ղեռ բոլորը չէ, Բաստամյանցն ու Պապովյանը թեև չեն նշել (զրա սնհրա-
 ժեշտությունը չկար), բայց I 26-ի և II 26-ի միջև կան տարրերության նրբե-
 րանգներ: Եա նկատի ունենալով, մենք գտնում ենք, որ II 12-ը հղում է

³¹ «Դատաստանագիրք հայոց», Լ. 124, ծանոթ. 224.

³² Նույն տեղում, էջ 340, ծանոթ. 732.

³³ Նույն տեղում, էջ 329, ծանոթ. 701.

³⁴ «Армянский Судебник Мхитаря Гоша», էջ 134, ծանոթ. 1.

11 26-ին և ոչ թե 1 26-ին: Նախ՝ Պիվաղյանը սխալվում է արդեն նրանով, որ ասում է թե «Գոշը հղում է այս հոդվածին» (Ա 33—Բ II 12—Խ. Թ.) առաջ գրված մի այլ հոդված: Մխիթարն այդպիսի բան չի ասում. նա ասում է միայն վերնագիրը այն հոդվածի, որին հղում է («ցույցնալ է ի կոուոյ դատաստանաց»): Մխիթարը հղում է կովի մասին ընդհանուր հոդվածին և ոչ թե այդ արարքի մասնավոր դեպքերը նկատի ունեցող հոդվածներից որևէ մեկին: Կովի մասին միակ ընդհանուր հոդվածը Դատաստանագրքում «Յաղագս դատաստանաց կոուոզաց» հոդվածն է՝ Բ II 26 հոդվածը (== Ա 60): Տարբերության մյուս նրբությունները, որոնք նույնպես հաստատում են մեր եզրակացությունը, ավելորդ են համարում նշել:

Այս հարցի կապակցությամբ Պիվաղյանը վկայակոչում է նաև քննվող հոդվածի Գ խմբագրությունը. «Եթէ կովին արք Բ և մինն մալաղ լինի և մէնն կատարեալ և ձգէ մալաղն և փետէ զմորութ կատարելոյն, դատաստան լիցի որ կտրեն զմալաղին մաղն Բ. տասլա, քանիլի ղկատարելոյն մորութն քարշեաց և եհան և է փայտ ի վերա թիկանդն տան: Ասալ թէ յաւագ մարլոյն եղև պատճառ կովոյն կէս վրիժուցն խնդրեսցի ի փոքերն, զոր ի սերոյ գրեցաւ, զի մի այլք այսպիսի իրս գործեսցեն»: Քննադատն ընդգծում է՝ «զոր ի վերո գրեցար» և ավելացնում. «Մեր կողմից ընդգծված բառերը նույն հղումն են արտահայտում» (էջ 203, ծանոթագր. 28), Պիվաղյանը լավ չի հասկացել բնագիրը: Ընդգծված բառերը նրա ակնարկած հղումը չէ որ արտահայտում են: «Ջոր ի վերոյ գրեցաք» բառերը հղում են ոչ թե կովի մասին որևէ հոդվածի, ինչպես սխալ հասկացել է Պիվաղյանը, այլ վերաբերում են միայն և միայն փոքրից վրեժի կես գինը գանձելուն: Թարգմանության անհրաժեշտությունն ակնհայտ է, ուստի՝ թարգմանենք: Հեղինակն ասում է. եթե կովի պատճառը եղել է ավագը, փոքրից գանձել վրեժի կես գինը, ինչպես վերո գրեցինք: Գ խմբագրության ԻԲ-ԻԶ հոդվածները նախատեսում են հանցակազմեր, որոնց սուբյեկտները անչափահասներն են: «Ջոր ի վերոյ գրեցաք» բառերով հեղինակն ակնարկում է այդ հոդվածները, դրանց է հղում: 25-րդ հոդվածում, օրինակ, կարդում ենք: «Եթէ մանկունք գրաւ դնեն... քնեսցեն զամբն... և կէս տուգանք լիցի ի վերա նորա և թէ վնասեալն աւելի ամաւք իցէ, քան զայն որ զգրաւն եղ»:

Անցնենք Պիվաղյանի վկայակոչված երկրորդ հոդվածին, որը ըստ նրա «մի ավելի ակնառու օրինակ է» (էջ 203): Խոսքը Ա խմբագրության 37-րդ հոդվածի մասին է. «Յաղագս դատաստանաց զբահանայս անարդողաց». Այստեղ ասված է. որ «...և սալս դատաստան և ու ճախ Բան զսա ետբեմն Բ. և սակաւ ինչ գրեցաւ, այլ երկրորդել յաւթարեցար այժմ յառաքելական կանոնաց...»:

Պիվաղյանը շարունակում է. Դարձյալ ուշադրություն դարձնենք ընդգծված տողերի վրա,—գրում է նա:—Այս հոդվածի առաջին մասը Առաքելական կանոնախմբի 25-րդ կանոնն է: Երկրորդ մասը Գոշի ավելացումը, որտեղ նա նշում է, որ ինքը այդ մասին, սրանից առաջ («նախ քան զսա»), մի ժամանակ («երբեմն» — ատենով) գրել է («գրեցաք» — գրեցինք), իսկ այժմ երկրորդում է: Բնական է, որ այն հոդվածը, որին հղում է Մխիթարը, պետք է զրված լինի սույն հոդվածից առաջ—չէ՞ որ հենց ինքը ասում է, որ դրանից առաջ է գրված և որ ինքը երկրորդում է: Բայց ինչ է պարզվում. Մխիթարի հղած այս հոդվածից առաջ գրված հոդվածը բաժանում չունեցող տարբերակում գրված է

շատ հետո. սույն հոդվածը 37-րդն է, իսկ այն հոդվածը, որ առաջ է գրել և որին հղում է՝ 105-րդ հոդվածն է՝ «Յաղագս դատաստանաց արհամարհողաց զքահանայս եւ զդատաւորս» վերնագրով: Ինչպես սպասելի էր՝ այդ հոդվածները ևս իրենց բնական տեղն ու կարգն ունեն երկու մասերի բաժանված տարբերակում: Հղող, երկրորդով, կրկնվող հոդվածը գտնվում է 11 մասում (N° 15), իսկ առաջինը, այն հոդվածը, որին հղում է՝ 1 մասում (N° 40)» (էջ 203—204):

Պիվադյանը այս անգամ ևս շտապել է, Դատաստանագիրքն անհրաժեշտ չափով չի ուսումնասիրել: Նախ, բերենք հոլովով հոդվածների համեմատական համարները. Ա 37=Բ 11 15, Ա 105=Բ 1 40: Զի կարելի ասել, թե Ա 37-ը հղում է անպայման Ա 105-ին, իսկ այդ ասելուց հետո էլ, չի կարելի ասել, թե Բ 11 15-ը հղում է անպայման Բ 1 40-ին և ոչ թե Բ 11 66-ին: Բանն այն է, որ «Յաղագս դատաստանաց արհամարհողաց զքահանայս եւ զդատաւորս» հոդվածը (—Ա 105=Բ 1 40=Բ 11 66) Բ խմբագրության ձեռագրերում կա և առաջին մասում 40-րդ համարի տակ և երկրորդ մասում 66-րդ համարի տակ: Բաստամյանցը Դատաստանագրքի 248-րդ ծանոթագրության մեջ ասում է. «Մեր N° 492 օրինակում նույն վերնագիրը նույնությամբ դրած է և երկրորդ կամ աշխարհական մասի ցանկի մեջ ԿԶ համարով... մենք իհարկե ավելորդ համարեցինք կրկնել միևնույն կանոնը երկու մասում և թողինք անշարժ սույն առաջին մասի մեջ»³⁵: Ի՞նչ կլինե՞ր Պիվադյանի վիճակը, եթե Բաստամյանցն այդ հոդվածը թողնե՞ր ոչ թե առաջին, այլ միայն երկրորդ մասում: Մեր մեծարգո քննադատի փաստարկը, եզրակացության հետ միասին, հօդս կցնդե՞ր: Պիվադյանը փաստերի առաջ աչքերը փակելով պնդում է, որ Ա խմբագրությունում միակ հոդվածը 105-րդն է, որին հղում է արված 37-րդ հոդվածում և որ 37-րդից առաջ չկա ոչ մի հոդված, որին հղել: Ըիշտ չէ: Ա խմբագրությունում 37-րդ հոդվածից շատ առաջ գրված է 5-րդ հոդվածը՝ «Յաղագս դատաստանաց քահանայից»: Համեմատենք այս հոդվածի համապատասխան մասը 37-րդ հոդվածի հետ.

Հոդված 37 (Ա խմբագրություն)
 «Իարգեցին առաքելքն եւ եղին հաստատութեամբ՝ եթէ մի որ անարդեացէ եւ անգոսնեացէ եւ արհամարհանաւ կալցի զքահանայն թէ եւ կարի որ յանարգաց ից՝, զիտասցէ զի Աստուած անարգէ...»

Եւ զայս դատաստան եւ որ նախ քան զսա երբեմն թէ եւ սակաւ ինչ դրեցաք, այլ երկրորդել յաւթարեցաք այժմ յառաքելական կանոնաց...:

Հոդված 5 (Ա խմբագրություն)
 Եւ եթէ ժողովրդական որ արհամարհէ զքահանայ իւր նախատելով, եւ կամ յանդգնի, եւ կամ հարկանէ, դատաստան է իրաւարբ հատանել զձեռն:

³⁵ «Դատաստանագիրք հայոց», էջ 134—135:

Ինչպես տեսնում ենք, երկու հոգվածներում էլ նույն հարցի մասին է խոսքը: Ուրեմն՝ մենք բոլոր հիմքերն ունենք ասելու, որ 37-րդ հոգվածով Մխիթարը հղում է հենց այս՝ 5-րդ հոգվածին, որովհետև 37-րդ հոգվածից առաջ («նախ քան դսա») զրված-զրված և նույն հարցի մասին խոսող հոգվածը 5-րդն է: Սա բավական ընդարձակ մի հոգված է, որտեղ քահանային անարգելու մասին խոսվում է միայն բերված հատվածում: Որովհետև 5-րդ հոգվածում խոսելով քահանաների հետ կապված շատ հարցերի մասին Մխիթարը, ի միջի այլոց, մի քիչ էլ խոսում է քահանաներին անարգելու մասին, այդ պատճառով 37-րդում նրա ականարկը՝ «նախ քան դսա թէև սակաւ ինչ գրեցաք», վերաբերում է հենց 5-րդ հոգվածին և ոչ թե 105-րդին, որը ոչ թե «սակաւ ինչ» զրված, այլ բավական ընդարձակ հոգված է նվիրված հատկապես այդ հարցին:

Ամփոփենք. Պիվագյանի բոլոր փաստարկները, այսպես ասած «առարկայական ասպարեզները» հօդուտ Բ խմբագրության սկզբնականության անհիմն են և ոչինչ չեն ասպարեզում: Ուրեմն՝ ճիշտ է մեր եզրակացությունը՝ Ա խմբագրության սկզբնական լինելու մասին: Սակայն մեր հրատարակած հոգվածում բերված փաստերով չեն սպառվում Ա խմբագրության սկզբնականությունը հաստատող տվյալները. դրանք շատ են: Այստեղ բավականանք լրացուցիչ երկու փաստ բերելով:

Դատաստանագրքի Բ խմբագրության առաջին մասի 82-րդ հոգվածում Մխիթարն ասում է. «Յաղագս այնորիկ ի դատաստանաց քազսուրացն ի սպանանել այլագգոյ ակամայ, իբր գկաւաւորի Լդաք դատաստան»³⁶: Քազավորաց դատաստանը Բ խմբագրությունում 2-րդ մասի առաջին հոգվածն է, այսինքն՝ զրված է շատ հետո. քան առաջին մասի 82-րդ հոգվածը: Մեր քննադատի բառերով ասած՝ չի՝ կարծում արդյոք Պիվագյանը, որ մասերի բաժանված խմբագրությունում հոգվածի տեղը այն չէ, ինչ որ պետք է լինելու: Ավելի վաղ զրված հոգվածում հեղինակը կասե՛ր, թե այդ դեպքի մասին արդեն գրել է, զրված է: Դարձյալ մեր քննադատի բառերով ասած՝ այս հոգվածների կարգը բնական է մասերի բաժանում շունեցող խմբագրությունում, որտեղ հղում պարունակող հոգվածը 173-րդն է (— Բ I 82), իսկ այն հոգվածը, որին հղում են՝ երկրորդն է (— Բ II 1): Բ I 82-ից բերված հատվածի վերաբերյալ ծանոթագրության մեջ Բատամյանցը գրում է. «Մխիթարը ականարելում է դատաստանագրքիս երկրորդ կամ աշխարհական մասի Ա հոգվածի մի կտորը: Գոշի խոսքերից երևում է, որ աշխարհական օրենքների Ա հոգվածը առաջ է հորինված քան թե սույն 26 (— 82) կանոնը: Եվ հիմա՛վի Ա՝ 488, 489, Սին. և Վենետիկյան օրենականների մեջ Ա հոգվածը զրված է Բ համարով. ...Բացի սրանից, այդ առավել ևս պարզ երևում է Ա հոգվածի սկզբի տողերից. երոնե՛ ցուցանում են նույնպես, որ Ա կանոնից հետո անմիջապես դրված է այս՝ Ա հոգվածը»³⁷: Բ II 1 հոգվածի սկիզբն է. «Յառաջագոյն գրեցաք զեկեղեցւոյ դատաստան. ...իսկ երկրորդ նմին կարգեսցուք զդատաստան թագաւորի և իշխանաց...»³⁸: Պարզ է ասված՝ «եկեղեցու դատաստանից» անմիջապես հետո («երկրորդ նմին») զրվել է «թագաւորաց դատաստանը», այնինչ Բ խմբա-

³⁶ Նույն տեղում, էջ 182—183:

³⁷ Նույն տեղում, էջ 183, ծանոթ. 361:

³⁸ Նույն տեղում, էջ 299:

գրությունում վերջինը դրված է տառջինից 124 հոդված հետո: Այդ հոդվածներին կարգը ձիշտ և նիշտ Մխիթարի ասածի նման է Ա խմբագրությունում, որտեղ առաջին հոդվածը «Եկեղեցու դատաստանն» է, իսկ երկրորդը՝ «Բազմոթագ»:

Մի փաստ ևս: Վերը բերեցինք Մխիթարի նամակը ուղղված Գրիգոր Տղա կաթողիկոսին: Այժմ ուշադրություն դարձնենք այդ նամակի հետևյալ տողերի վրա. «Եւ արդ, եթէ ինչ գտցի՝ հաճելի ձեզ, Տեառն շնորհ. ...և եթէ բնաւին սնաւգուտ յեկեղեցի իցէ և սլաւաւառ գայթակղութեանն՝ հրոյ տացես օտարակ եւ հրամայիցես և որ առ մեզ է աւրինակ զնոյն առնել և անխափան ձեռք կտոց-ով հրաման»: Եթե կաթողիկոսը այրեր իր օրինակը և եթե նույն կերպ վարվեր նաև Մխիթարը, ապա Դատաստանագիրքը ոչնչանալու էր, չքանալու էր: Նշանակում է՝ նամակը գրելու ժամանակ ընդամենը երկու օրինակ կար դատաստանագրից՝ Մխիթարին և զրանից՝ ընդօրինակված՝ կաթողիկոսին: Ահա, բուն Մխիթարյան, իրեն՝ Մխիթարի գրչի տակից դուրս եկած անմիջական օրինակից կաթողիկոսի համար արտագրված այդ օրինակը (կամ նրանից կատարված հնագույն մի ընդօրինակություն) հասել է մեզ: Դա Զմմառի՝ ձեռագիրն է: Իսկ Զմմառի ձեռագիրը Ա խմբագրության է (մասերի բաժանում չունի): Հետևությունը բխում է ինքն իրեն. Մխիթարը սկզբում կազմել է Ա խմբագրությունը, սկզբնականը դա է, Բ խմբագրությունը կազմվել է հետո, սկզբնականը չէ: Պիվադյանի կարծիքը Բ խմբագրության սկզբնականության մասին սխալ է:

«Բանբերում» տպագրված մեր հոդվածի հետ գործը վերջացրած համարելով. Պիվադյանը հայտարարում է. «Այժմ իսկ անցնենք Թորոսյանի մյուս հոդվածներին» (էջ 205) և սկսում է «Դատմա-բանասիրական հանդեսի» 1963 թ. № 1-ում տպագրված հոդվածից:

Այդ հոդվածում Դատաստանագրի Գ խմբագրությունը մենք բնութագրել ենք մի քանի առանձնահատկություններով, և գտել, որ այդտեղ «Դատաստանագրի համարյա բոլոր հոդվածները, ներառյալ նախադրությունը, զգալի չափով, իսկ երբեմն նաև խիստ համառոտված են: Հատկանշականն այն է, որ համառոտելու ամբողջ աշխատանքը կատարվել է ոչ թե իրավաբանական միտքը, իրավական դրույթները կրճատելու հաշվին, այլ իրավական բովանդակությունը կրոնական հավելումներից զատելու ուղղությամբ»: Պիվադյանը, իհարկե, առարկում է. «Իրականության չի համապատասխանում սա: Այս ձեռագրախմբում «համարյա բոլոր հոդվածները» չեն, որ համառոտված են. համառոտված են միայն նախադրությունը և մի երկու հոդված» (էջ 206. ոնդգծումը մերն է. — Խ. Թ.): Տեղի սղության պատճառով ընթերցողին ենք թողնում համեմատելու Ա և Բ խմբագրությունների համապատասխան հոդվածների հետ Գ խմբագրության հետևյալ հոդվածները. Բ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԻԲ, ԻԳ, ԻԷ և այլն և այլն: Այս հոդվածները մյուս խմբագրությունների համեմատությամբ Գ-ում համառոտված են տեղ-տեղ զգալի չափով. տեղ-տեղ կիսով չափ, տեղ-տեղ $\frac{2}{3}$ -ի չափով: Ինչպես տեսնում ենք, իրականության չի համապատասխանում ոչ թե Թորոսյանի, այլ Պիվադյանի գրածը: Համառոտված է ոչ թե մի երկու հոդված, այլ շատ: Պիվադյանը այնուհետև գրում է. «Դժվար է հասկանալ, թե ինչ կնշանակի հոդվածները գտել կրոնական տարրից: Այդպիսի բան չի կատարված, չէր էլ կարող կատարվել» (206): Այսպես, ուրեմն, միջնադարյան դատաստանագրի գտնված կրոնական տար-

րից, հավելումներից հնարավոր չէ, այդպիսի ըմբռնումը հակապատմական է: Աշխարհում ոչ ոք, հուսանք, որ գոնե այս դեպքում նաև Պիվաղյանը, չի կարող ժխտել, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը միջնադարյան է: Ուստի բավական է մատնացույց անել այդ Դատաստանագիրքը, որպեսզի տեղն ու տեղը զրոյի հավասարվի Պիվաղյանի առարկությունը, նրա «պատմական ըմբռնմամբ» հանդերձ, որովհետև միջնադարյան դատաստանագիրքը կրոնական հավելումներից զտելու շատ ցցուն օրինակ է հենց Սմբատի Դատաստանագիրքը: Տարօրինակ է, բայց այդ մասին գրել է նաև Պիվաղյանը. «Հայտնի է, որ Մխիթարը իր հոգվածների մեծ մասում, եթե նրանք ունեն գրավոր աղբյուրներ, բերում է նախ իր աղբյուրը բառացի և ապա դնում իր սեփական խորհրդածություններն ու մեկնաբանությունները: Եվ, ահա, Սմբատը այդ հոգվածները փոխադրել-քաղցմանելիս մեծ մասամբ բաց է թողնում աղբյուրները և վերցնում է Գոշի խորհրդածություններն ու մեկնաբանությունները: Սմբատը մի կողմ թողնելով Մխիթարի աղբյուրները վերաշառաղրում է, «փոխում» է նրա մեկնաբանությունները: Այդպես է վարվել Սմբատը բազմաթիվ դեպքերում»³⁹: Պարզ է ամեն ինչ. 1960 թ., Ա. Գալստյանի հետ բանավիճելիս, Պիվաղյանին անհրաժեշտ է եղել ասել, որ միջնադարյան դատաստանագիրքը կարող է զտվել կրոնական հավելումներից, նա այդպես էլ ասել է, դա համարելով պատմական ըմբռնում: 1964 թ., Թորոսյանին հերքելու համար արդեն անհրաժեշտ է դարձել ասել, որ միջնադարյան դատաստանագիրքը չի կարող զտվել կրոնական հավելումներից, և ահա, Պիվաղյանն այդպես էլ ասում է, այժմ դա համարելով հակապատմական ըմբռնում: Հիրավի, շատ էն հակասական մեր հարդարժան ընդդիմախոսի ըմբռնումները:

Ի խմբագրության մյուս առանձնահատկությունը հետևյալն է. Ա խմբագրության համեմատությամբ Գ խմբագրության մեջ խոսքը հակիրճ է, իրավաբանական միտքը՝ որոշ չափով խտացված, իրավական որոշ գրույթների անորոշ սահմանումները՝ վերացած: Պիվաղյանը դարձյալ ու դարձյալ համաձայն չէ. «Սա ևս իրականության չի համապատասխանում: Այս ենթախմբում որոշ կրճատումներ կան. այդ մասին ասացինք, բայց դա իրավաբանական մտքի խտացում չէ, ոչ էլ՝ «իրավական որոշ գրույթների անորոշ սահմանումների» վերացում: Այդօրինակ խմբագրման «Իստաստանագիրք» չի ենթարկվել» (էջ 206, ընդգծումը մերն է—Խ. Թ.): Ի հաստատումն այն բանի, որ Գ խմբագրությունում իրավական որոշ գրույթների անորոշ սահմանումները վերացված են, մենք վկայակոչել էինք Զ հոգվածի հետևյալ հատվածը՝ երկու խմբագրություններով.

Ա խմբագրություն
Եւ եթէ անասուն բերեալ իցէ,
դզլուխն տացեն եւ դաճն յերկուս
բաժանիցեն յաղագս աշխատելոյ
ի պահելն:

Գ խմբագրություն
Եւ թլ անասուն բերեալ իցէ
կինն, ըզզլուխքն առցէ և զկէս
անոյն և կէսն այրկանն տացի
մասն աշխատութեան և ծախիցն:

39 է.մ. Պիվաղյան, Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերի առնչակցությունը. «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, էջ 124—125 (ընդգծումները մերն են—Խ. Թ.):

Պիվազյանը մեջ է բերում այդ հատվածները և շարունակում. «Ինչպես երևում է, հոգվածի երկու խմբագրությունների բովանդակության մեջ ոչ մի տարբերություն չկա: Ըստ Թորոսյանի «Ա խմբագրության նորմի ձևակերպումը հստակ չէ: Իրավաբանական անորոշությունը լայն հնարավորություն է բնթեոում նորմին տալու ինչպես տարածական, այնպես էլ սահմանափակ մեկնաբանում»: Ո՞րն է սոռաջինի անորոշությունը և երկրորդի որոշությունը: ալն, որ առաջինում ասված է, թե... ամուսինների բաժանման դեպքում կնոջ բերած անասունների աճը երկուսի պետք է բաժանվի, իսկ երկրորդում՝ կեսը մեկին պետք է տրվի, կեսը՝ մյուսին: Այստեղ, իրոք, ոչ մի անորոշություն, այլ տարբերություն չկա. «յերկուսս բաժանել, նշանակում է կիսել, որևէ բան երկուսի բաժանել, այլ բան չի նշանակում քան կիսել» (էջ 206—207. ընդ. չծումբ մերն է—Խ. Թ.): Մեր մեծարգո քննադատին հայտնի պետք է լիներ. «յերկուս բաժանել» չի նշանակում անպայման կիսել, թվաբանական գործողության իմաստով 2-ի բաժանել, այլ նշանակում է երկու մասի բաժանել: Պիվազյանն, անշուշտ, կպահանջի «այսպես ասած առարկայական ապացույց. ներ», ուստի բերենք մեր ձեռքի տակ եղած տասնյակներից միայն երկուսը:

Արիստակես Հաստիվերտին իր «Պատմության» ԺՁ գլխում նկարագրում է սելջուկյան արյունարբու սուլթանի ու նրա բանակի գործած ոճիրները. այդ կապակցությամբ գրում է, որ «Ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զքաղաք մարդախիտ առատությամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, ՅԵՐԿՈՒՍ ԲԱԺԱՆԵԼԻ կամ սրակոտոր կամ զերի»⁴⁰: Եթե հետևենք Պիվազյանին, պետք է եզրակացնենք, որ քաղաքը կամ դավառը գրավելուց առաջ նվաճողը (տվյալ դեպքում՝ «արինարբու Սուլթանը») նախ մարդահամար է անցկացրել, որպեսզի հետո չիցե թե կոտորվելիք կեսից մեկն ու մեկը հանկարծ ընկնի գերիների կեսը, կամ հակառակը: Իսկ քաղաք ներխուժելուց հետո՝ հատուկ մարդիկ սկսել են հաշվել (թե ինչպե՞ս, ալ ոչ միայն Պիվազյանը կասի) սրակոտորներին և իրք հասել են բնակչության թվի ուղիղ կեսին՝ դադարեցրել ևն կոտորածը և այլն: Մի խոսքով՝ ոչ թե թոհուբոհ, զենքի շառաչ, խուճապ, արյունահեղություն, այլ մաքուր թվաբանություն:

Մի փաստ ևս. անդրադառնալով 387 թ. Հայաստանի բաժանման տխուր փաստին, Ղ. Փարպեցին գրել է. «Եւ ի ԲԱԺԱՆԵԼԻ զթագաւորութիւն Արշակունւոյն ՅԵՐԿՈՒՍ»⁴¹, իսկ Կ. Գանձակեցին՝ «Եւ ապա թագաւորն յունաց և պարսից զաշխարհս հայոց ՅԵՐԿՈՒՍ ԲԱԺԱՆԵՑԻՆ»⁴²: Հայաստանի բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կատարվեց այսպես. «Ձմեճ մասն, զլաւն և զպիտանին և զարդաւանդն աշխարհիս հայոց ունել ի բաժին աւբային Պարսից, քանզի թէպէտև հասեալ բազում զաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին յունաց՝ սակայն համեմատ էին այն միայն Այրարատեան զաւառին»⁴³: Ակադ. Մանանդյանը վկայակոչում է Պրոկոպիոսին, ըստ որի՝ Պարսկաստանին անցել էր Հայաստանի մոտ 1/3 մասը, իսկ Հունաստանին՝ 1/3-ը⁴⁴: Ըստ Պիվազյանի «յերկուս բաժանել» նշանակում է կիսել, երկու հա-

40 «Պատմութիւն Արիստակեսի Հաստիվերտոյ». Երևան, 1963, էջ 87:

41 «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1904, էջ 8:

42 Կ ի բ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ջ ի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1960, էջ 24:

43 Ղ. Փ ա Ր Պ Ե Ց Ի, էջ 8:

44 Տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Բ, մաս Ա, էջ 239—240:

վասար մասերի բաժանել, բայց «յերկուս բաժանված» Հայաստանի մասերը հարաբերում էին միմյանց այնպես ինչպես $\frac{1}{4}$ -ը $\frac{1}{5}$ -ին: Այսպիսին են փաստերը, որոնցից անհերքելի երկու եզրակացություն է բխում. առաջին՝ Պիվազյանը քաջ զորաբարադես է, երկրորդ՝ «յերկուս բաժանել» չի նշանակում անպայման կիսել: Հետևապես վերոհիշյալ նորմը Ա խմբագրությունում իրոք հստակ չի ձևակերպված, իրավական անորոշություն է պարունակում: Այդ անորոշությունն էլ հենց վերադրված է Գ խմբագրությունում:

Գ խմբագրությունում Դատաստանագրքի լեզուն ինչ-որ չափով տարբերվում է Ա խմբագրության լեզվից: Գ-ի լեզուն Ա խմբագրության զորաբարը չէ: Այն մենք համարել ենք ժամանակի ժողովրդական-խոսակցական լեզու՝ միջին հայերեն: Ընթերցողն արդեն կռահում է, որ Պիվազյանը, նորից ու նորից, համաձայն չէ. «Ճիշտն ասած. — գրում է նա, — մեզ համար անսպասելի էր նմանօրինակ մի հայտարարություն: Հայտնի է, որ Մխիթար Գոշը միջին հայերենով ոչինչ չի գրել... Գ խմբագրությունը միջին հայերենով չի շարադրված... միայն նախագրությունը և առաջին մի քանի հոդվածները մի փոքր համառոտված են... տեղ-տեղ զորաբարյան ձևերը միջին հայերենի ձևերի փոխված են միայն այդ մասերում» (էջ 207): Նախ՝ մենք ոչ մի տեղ չենք ասել, որ Գ խմբագրությունը կազմել է Գոշը: Այդ խմբագրությունների լեզվի հետ ժանոթանալու համար բերենք երկու օրինակ.

Ա (Բ) խմբագրություն
Նախադրություն, գլուխ Ա
...Եւ զի ինքեանք զայթա-
կղեալք՝ զբաղումս զայթակղեցու-
ղանեն սոքաւք ի պարզամտացն:
Որոց եւ նախ զայս ասասցուք...

Գ խմբագրություն
Նախադրություն, գլուխ Ա
Եւ այս անյարմար մարդոց
բանք են, որ ոչ գիրք են կարդա-
ցեալ և ոչ ուսեալ: Ապա պարտ է
մեզ ասել ըզորդ և գրել... զայն-
ցեղ մարդն սպանենլ արժան է.
հայնց պինտ է ու այլքն:

Ըստ Պիվազյանի Գ խմբագրության լեզուն էլ զրաբարն է, Գոշի լեզուն: Արարիք կա՝ սակայն ապացուցելու հակառակը: Բերենք նաև ԼԳ հոդվածը.

Ա (Բ) խմբագրություն
Յաղագս զատաստանաց կոռու-
ղաց եւ խլողաց զմոռուս
Եթէ կոռուցին արք և մինն
պատահի անկատար լինել եւ
լանդղնեալ փետտիցէ զմոռուս
կատարելոյն, դատաստան լիցի.
կրկին մասամբ զհերսն հատա-
նել...

Գ խմբագրություն
Վասն ուրբ կովին և գիրեւաց մո-
ռուք փետեն
Եթէ կովին արք երկու և մինն
մալաղ լինի և մինն կատարեալ
և ձգէ մալաղն և փետէ զմոռուք
կատարելոց, դատաստան լիցի,
որ կտրեն զմալաղին մաղն եր-
դու տապա...

Ակնհայտ է Գ խմբագրության մեջ միջին հայերենի տարրերի առկա-
ցությունը:

Գ խմբագրության լեզվի և միջին հայերենի տարբերությունը ցույց տալու համար Պիվազյանը մի առակ է բերում Վարդան Այգեկցուց: Չենք կարող ասել, թե օրինակը հաջող է բնութագրված, որովհետև Այգեկցին գրում է միջին հայերենի նմուշ հանդիսացող նաև այս լեզվով. «Գորտ մի կայր ի շափ եղան

միոյ և ունէր գեղեցիկ ծայն և քաղցր և ասէր, թէ խիստ աղելի բժիշկ ևմ. և ևլաւ ի լեառն մի բարձր, գոշէր և ասէր, թէ ամենայն ցաւոց դեղ ունիմ. և ժողովեցան յաշխարհն ամենայն և ևլին ի լեառն մեծաւ աշխատութեամբ. իրրև տեսին գնա. գի էր դորտ դադիր կերպարանօք և բարկոծ արարին գնա և սպանին և ասեն. ով պիղծ, որ դու բժիշկ ևս, դու պեղ է՞ր շես բժշկել»⁴⁵:

Անկախ բերված օրինակներից, մենք մեզ իրավասու չենք համարում որոշելու որևէ երկի, առավել ևս միջնադարյան հուշարձանի, լեզվի բնույթը: Գտնում ենք, որ դա ոչ իրավաբանի և ոչ էլ բանասերի գործ է, այլ՝ մասնագետ լեզվաբանների, ուստի դիմենք նրանց: Հայագիտության մեջ Կարստր միակն է, որ հատկապես ուսումնասիրել է դատաստանագրքերը, դրանց լեզուն և միջին հայերենը: Ահա թե ինչ է գրում նա. «Գիտակցաբար ու որոշակի միտումով էապես վերափոխված խմբագրություն է C վերսիայում հանդես եկողը (մեր Գ-ն—Խ.Ք.): Այս խմբին պատկանող ձեռագիր դատաստանագրքերը... էնթաբլվել են գոեհիկ-լեզվական (vulgarsprechliche) վերափոխման, որն իր արտահայտությունն է գտել Կար. Սին. (և 749) ձեռագրերում»⁴⁶ (այդ ձեռագրերը պատկանում են Գ խմբագրության): Այնուհետև Կարստր հայտնում է, որ «վերը նշված գոեհիկ-լեզվական վերամշակման-վերափոխման (Rezension) հիմքում ուղղակի ընկած է, իհարկե ոչ պատահականորեն, կիլիկյան լեզվատիպը, որն արտահայտվում է այս խմբագրության մի քանի ներկայացուցիչների, հատկապես Սին. Կար. և 749 ձեռագրերում»⁴⁷: Թվում է, թե պարզ է. բնթերցողը, հավանաբար, կհավատա միջին հայերենի խոշոր մասնագետ-լեզվաբան Կարստին և ոչ թե Պիվազյանին:

Գ խմբագրության վերջին առանձնահատկությունը վերաբերում է շինականների մասին հայտնի հոգվածին: Ահա այն.

Դ խմբագրություն

Ազատ յարարչէն եղև մարդկային բնութիւնս, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր և հող ազատ է ուր և կամեսցի գնասցէ, և բնակեսցէ և ոչ ի իրաւունք իշխանաց և թագաւորաց բռնադատել զոր կալ ի մի զեղ կամ ի մի երկիր:

ԱԲ խմբագրություն

Ազատ յարարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան՝ զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ: Ասլա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն և բռնապատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ:

Սրա մասին մենք գրել ենք. «Յուդացիների ձորտացումը մի դեպքում արգելվում է օրենքով, մյուս դեպքում՝ ամրապնդվում: Պիվազյանն, իհարկե, համաձայն չէ: Ինչպես միշտ, այս անգամ էլ նա նորից ու նորից ձգտել է ան-

⁴⁵ Ն. Մ ա ո, Ժողովածոյք առականց Վարդանայ, մասն Բ, էջ 296:

⁴⁶ J. Karst. Grundriss der Geschichte des armenischen Rechtes, Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX B. էջ 372 (ընդգծումները մերն են—Խ.Ք.):

⁴⁷ Նույն տեղում, էջ 373 (ընդգծումները մերն են—Խ.Ք.):

պայման, ինչ զնով էլ լինի, հերքել մեղ և ընկել է հակասությունների մեջ՝ պնդել մի բան և մերժել այդ պնդումը ոչ միայն տարբեր հոգվածներում, այլև միևնույն հոգվածի իրար հարող էջերում: Համեմատենք.

Պիվագլան, էջ 209

Երկու ղեպքում էլ ճորտությունը, ճորտացումը չի ամրապնդվում օրենքով. երկու ղեպքում էլ գյուղացին աղատ է իր ցանկացած վայրում ապրելու:

Պիվագլան, էջ 210

Ճորտացումն արգելում է միայն 'ր խմբագրության փոփոխակը:

էջ 209

Միևնույն հոգվածի երկու տարբերակները հակադիր տեսակետներ չեն արտահայտում ճորտացման կամ ճորտության մասին:

էջ 210

Այս սկզբնական խմբագրության ճորտացումն արգելող հոգվածը (իսկ հոգվածը այս տեսակով կա միայն 'Գ խմբագրության' մեջ)...

Ընթերցողին թողնենք որոշելու, թե ում դեմ, ինչի՞ դեմ և, մանավանդ ինչի՞ համար է առարկում Պիվագլանը

Քննադատականի վերջում Պիվագլանը մի վերջին ճիղ է գործադրում մեր հոգվածների միջև հակասություն հայտնաբերելու ակնկալությամբ, վերջապես հորինում է այդ հակասությունը և ապա սկսում է հարձակվել երևակայական ախտյանի վրա: Ըստ Պիվագլանի «Բանբերի» հոգվածում մենք, իբր թե սսում ենք, որ Դատաստանագրքի սկզբնական խմբագրությունը 'ր-ն է, իսկ «Հանդեսի» հոգվածում ասում ենք, որ 'ր-ն սկզբնական չէ: Ով կարդացել է կամ կկարդա «Բանբերի» մեր հոգվածը, կտեսնի, որ այնտեղ ապացուցվում է միայն և միայն մի բան՝ սկզբնական խմբագրությունը Ա-ն է: Գ խմբագրության մասին այնտեղ ոչ մի խոսք չկա: Միայն ասել ենք, որ Ա խմբագրությունում որոշ ձևադրեր առանձին ենթախումբ են կազմում, որի մասին հատուկ հոգված ենք պատրաստում: «Հանդեսի» հոգվածն էլ հենց ամբողջովին նվիրված է այդ ենթախմբին՝ Գ խմբագրությանը: Ահա ամբողջը: Պիվագլանը փորձում է «փաստարկել» իր հայտարարությունը. «Ա խմբագրության սկզբնականը համարելու հարցում նա իր բոլոր դատողություններն անում է և եզրակացությունները հանում 'ր տարբերակի ընձեռած փաստերի հիման վրա, այդ եզրակացությունների հիմնավորման համար բերած բոլոր քաղվածքները ' տարբերակից են: Փաստերից ամենակարևորը հենց ճորտության վերաբերյալ հոգվածն է» (էջ 210): «Բոլոր քաղվածքները» ընդամենը երեքն են՝ հոգվածների գլխավարությունը (որը, ճիշտն ասած, քաղվածք էլ չի), դատական իրավասության վերաբերյալ հատվածը և շինականների մասին հոգվածը: «Բանբերի» հոգվածում հարցը դրված էր մի որոշակի տեսանկյունով, այն է՝ սկզբնական խմբագրությունը մասերի բաժանում ունեցողն է, թե՞ շունեցողը: Այդ պատճառով, 'ր ձևադրախմբի մասին վերն արված վերապահումը նկատի ունենալով, այդ երկու (Ա և 'ր) ձևադրախմբերը միասին են հակադրվել Բ ձևադրախմբին:

Հոգվածների գլխավարությունը Ա և Գ ձևադրախմբերում բացարձակապես նույնն է: Ա և 'ր ձևադրախմբերում բացարձակապես նույնն է նաև դատական իրավասության վերաբերող հատվածը, ուստի, դարձյալ նշանակու-

թյուն չունի թե որ խմբի ձևադրից է վկայակոչված փաստը, թեև «Բանբերի» հոդվածում այդ հատվածի տակ մենք նշել ենք թե՛ Ա և թե՛ Գ խմբի ձևադրեր⁴⁸։ Մենք էլ շինականների մասին հոդվածը։

«Բանբերում» այդ հոդվածը վկայակոչված է երկու անգամ⁴⁹, և՛ Ա խմբադրության ձևագրերից (վենետիկյան), և՛ Դ խմբադրության (ձև. № 2593)։ Վերջին դեպքում վկայակոչված է ցույց տալու համար, որ հոդվածի, կրկնում ենք՝ հոդվածի սկզբնական խմբադրությունը Դ ձևադրախմբում է պահպանված։ Խե ինչու ենք մենք այդպես ենթադրել, դա առանձին հարց է և ունի իր հիմքերը, որոնց կանգրադառնանք մի այլ անգամ։ Պիվազյանը, ըստ երևույթին, նույննացրել է մեկ հոդվածի խմբադրության սկզբնականության հարցը ամբողջ Դատաստանադրի խմբադրության սկզբնականության հարցի հետ։ «Բանբերի» հոդվածում խոսքը ոչ թե Դ խմբադրության սկզբնականության մասին է, այլ այդ խմբադրության հոդվածներից միայն մեկի՝ սկզբնականության մասին։

Քննադատականում կան ուրիշ սխալներ և անհարկի հայտարարություններ ևս, բայց վերջացնենք։ Ինչպես դժվար չէ նկատել, է. Պիվազյանը իր ընդդիմախոսությունը շարադրելիս ի հայտ է բերել մերժելի միտումնավորություն և այդ է պատճառը, որ նա հաճախ անտեսել է փաստերը, արտահայտելով հակասական մտքեր և հանդել է կամայածին եզրակացությունների։ Պարզ է, որ այդպիսի խոսքը չի կարող հասնել իր նպատակին։

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ, СВЯЗАННЫХ С СУДЕБНИКОМ МХИТАРА ГОША

Х. А. ТОРОСЯН

(Р е з ю м е)

В статье Э. Пивазяна, опубликованной в «Историко-филологическом журнале» (1964, № 2), отрицались или оспаривались выводы и положения, выдвинутые в наших статьях, посвященных «Судебнику» Мхитара Гоша.

Как ранее приведенные факты, так и те, которые дополнительно приводятся в настоящей статье, доказывают, что наши основные выводы верны, в том числе: первоначальной является редакция А, представленная венецианской и зиммарской рукописями; составление первоначальной редакции завершено в 1184 г.; автором редакции Б, по всей вероятности, является также Мхитар Гош; редакции Судебника отличаются друг от друга не только по форме или перегруппировкой статей (система Судебника), но и по содержанию.

48 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 6, էջ 59։

49 Նույն տեղում, էջ 59 և 72։